



ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024
ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավերիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյոթ Թրախնա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնապետյան, Պիյեր Բատի

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես գեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

7

Միհրան Գալստյան

Մնալ, թե՛ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ

8

Լուսինե Տանաջյան

Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր

24

Սոնա Ներսիսյան

Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում

37

Սյուզաննա Բարսեղյան

Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում

49

II. ՆԵՐԳԱՐԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՅԱՆՎԱԾՆԵՐ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

65

Գայանե Հակոբյան

«Հալեալի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել

66

Գարիկ Աթանեսյան

Առտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում

78

Արմինե Տիգրանյան

Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հաղթութի շրջանի օրինակով)

89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

113

Ռուբեն Օհանջանյան

Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում

114

Լուսինե Անգելուշ

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում

124

Մակիչ Վարդանյան

Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը

139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ	
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ	157
<i>Սվերլյանա Պողոսյան</i>	
Հագուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ	158
<i>Հասմիկ Աբրահամյան</i>	
<i>Ռոման Հովսեփյան</i>	
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապատւոյտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի)	174
V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	189
<i>Ռուբեն Կարապետյան</i>	
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը	190
<i>Նարե Գալստյան</i>	
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում	204
<i>Նելլի Խաչատրյան</i>	
<i>Սալվինե Մարկոսյան</i>	
<i>Մարիամ Հարությունյան</i>	
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա)	218
VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ	237
<i>Հռիփսիմե Ասատրյան</i>	
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ	238
VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	247
Հայկազեան հայագիտական հանդեսի 2022 տարւոան զոյգ գիրքերը	248
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	263

ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

V

ԱՓՅՈՒԴՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Նարե Գալստյան, ա.գ.թ.

*Միրակուզայի համալսարանի Բերթոն Բլաքի ինստիտուտ,
Նյու Յորք, ԱՄՆ, ավագ հետազոտող*

ՀԱՅՐԵՆՆԻՔԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԼՈՍ-ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Միյությունը հիմնականում զբաղվող հետազոտողները հայրենիքի նկատմամբ կողմնորոշումը համարել են սփյուռքի ինքնության կարևոր գործոններից մեկը: Այդ հայեցակարգի կողմնակիցները հայրենիքը դիտարկում են որպես գաղափար, իդեալականացված վայր, որին անընդմեջ ձգտում են վերադառնալ սփյուռքի անդամները: Որոշ հեղինակներ այն քննարկում են որպես սփյուռքի հավաքական մոբիլիզացիայի հիմք: Այս մոտեցման շրջանակում ՀՀ-ն Միյությունը համար դիտարկվում է որպես մշտական վերադարձի երկիր, բայց այստեղ խնդրահարույց է մնում այն հարցը, թե Լոս-Անջելեսի հայկական համայնքի միգրացիոն տարբեր խմբեր, սերունդներ, մշակութային, լեզվական և կրոնական տարբեր ինքնություն ունեցող անձինք որքանով են նույնականացնում հայրենիքի և պետության սահմանները: Հոդվածում, հիմնվելով Միյությունի տարասեռ լինելու մոտեցման վրա, քննարկում ենք հետևյալ խնդիրները. արդյոք շուրջ մեկ դար և ավելի ձևավորված հայկական Միյությունի ինքնությունը չի փոխվել, և նրանք ինչ պատկերացումներ ունեն հայրենիքի մասին, արդյոք Հայաստանը շարունակում է ծառայել որպես Միյությունի ինքնության ձևավորման հիմք, արդյոք հավաքականորեն վերարտադրում են հայրենիքի գաղափարը՝ ի դեմս Հայաստանի, և Լոս-Անջելեսում դր խմբերն են այն վիճարկում: Դրանք ինչ ազդեցություն են թողնում Հայաստան վերադարձի գործընթացի վրա: Հոդվածում առաջ քաշված գաղափարները կարող են որոշ հստակություն մտցնել Միյությունի վերաբերյալ ակադեմիական այն բանավեճերի պարզաբանման մեջ, ըստ որի՝ նույնականացվում են «հայրենիք»-«պետություն» հասկացությունները, և Միյությունը դիտարկվում է որպես պետության հետ անմիջական կապ ունեցող միգրանտների խումբ:

Հոդվածը հիմնվում է Լոս-Անջելեսում և Հայաստանում իրականացված 49 խորին և 21 փորձագիտական հարցազրույցների նյութերի բովանդակային վերլուծության վրա, որոնք անցկացվել են 2020-2021 թթ.:

Հիմնաբառեր՝ սփյուռք, ինքնություն, հայրենիք, պետություն, միգրանտ, բազմազանություն, անդրազգային:

Ներածություն

Հայաստանը Միյությունի հետ հարաբերությունների ամրապնդման, ինքնության պահպանման, երկրի զարգացման գործում նրա ներգրավման, հայրենադարձության և այլ նպատակներով պետական կառավարման համակարգում ստեղծել է Միյությունի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ: Հայաստանը այդ հարցում վարում է պետականակենտրոն քաղաքականություն, որտեղ, ըստ էության, Միյությունի տարբեր խմբերի համար նույնականացվում են «հայրենիք»-«պետություն» հասկացությունները: Միյությունը դիտարկվում է որ-

պես պետության հետ անմիջական կապ ունեցող մի ամբողջություն՝ չվիճարկելով նրանում առկա բազմազանության խնդիրը: Սակայն այս մոտեցման շրջանակում Սփյուռքի տարբեր մշակութային շերտերի և սերունդների համար խնդրահարույց է մնում «հայրենիք» եզրույթը, քանի որ պատմական հանգամանքների բերումով նրանք այն կարող են չդիտարկել որպես պատմական հայրենիք կամ ծագման երկիր: Ավանդական Սփյուռքի առաջին սերնդի պարագայում պատմական հայրենիքը կարող է ընկալվել Արևմտյան Հայաստանը, որտեղից նրանք բռնագաղթվել են 1915 թ. ցեղասպանության պատճառով: Նրանց պատմական և հավաքական հիշողությունը կապված է այդ տարածքի հետ:

Նյույթերի վերլուծությունից պարզվում է, որ աշխարհի տարբեր երկրներից 1921-1936 թթ. Հայաստան է ներգաղթել շուրջ 42.286 մարդ, 1946-49 թթ.¹ 90 հազ. մարդ, 1960-1982 թթ.² 35 հազ. մարդ³, բայց նրանք Հայաստանի նախկին քաղաքացիները չեն եղել և ավելին՝ նախկինում այդ տարածքում չեն բնակվել: Այս պարագայում նրանց որոշ մասի համար խնդրահարույց կարող էր համարվել Հայաստանը որպես հայրենիք ընկալելը: Նրանք Հայաստան ներգաղթեցին տարբեր դրդապատճառներով՝ խորհրդային պետության պրոպագանդա, Երկրորդ աշխարհամարտից հետո պատմական հայրենիք վերադարձի ակնկալիքով, մի շարք երկրներում ստեղծված սոցիալ-տնտեսական ճգնաժամ, որը ծանր կացության մեջ էր դրել սփյուռքահայերին, անվտանգ ապրելու ձգտում են: Օրինակ, ցեղասպանությունից հետո Հունաստանում բնակվող 25 հազ. հայերից միայն 5 հազարն ունեին քաղաքացիություն, մյուսները զրկված էին անգամ տարրական իրավունքներից: Քաղաքական և սոցիալ-տնտեսական անկայուն վիճակում էին նաև Սիրիան և Լիբանան: Նյույթերի վերլուծությունից պարզվում է, որ 1946-1948 թթ. Հայաստան հայրենադարձվածների 20%-ը Հունաստանից էր, իսկ 37%-ը՝ Սիրիայից և Լիբանանից: Հակառակ դրան՝ մեկ տոկոսի սահմանը չհատեց ԱՄՆ-ից ներգաղթածների թիվը, քանի որ հայերն այնտեղ ավելի բարեկեցիկ պայմաններում էին ապրում⁴:

Անդրադառնալով սփյուռքի հիմնախնդիրներին՝ հետազոտողների մեծ մասը կենտրոնանում է «ավանդական» կամ «դասական» սփյուռքի բնորոշման վրա, որի հայեցակարգը կառուցված է էթնիկ պատկանելության, բռնի տեղահանման, ինչպես նաև հայրենիքի նկատմամբ կողմնորոշման շուրջ⁵: Որոշ հեղինակների մոտեցման հիմքում ընկած է հայրենիքի իդեալականացման գաղափարը, որոշակի աշխարհագրական տարածքի նկատմամբ հավաքական հիշողությունը, վերադարձը և հավաքական պատասխանատվությունը հայրենիքի անվտանգության, պահպանման և բարգավաճման համար⁶: Սակայն նման քննարկումներում երբեմն ստվերում է մնում և հաշվի չի առնվում սփյուռքի բազմազանության հարցը, և բավարար չի քննարկվում ինքնության և տարբեր սերունդների համար հայրենիքի կարևորության հիմնախնդիրը: Այս գաղափարը զարգացնելու համար մենք վերանայում ենք սփյուռք և հայրենիք

1 Մելիքության 1975, 45-46; 1983:

2 Laycock 2012.

3 Armstrong 1976; Pamela 1986; Safran 1991, 83-99; Vertovec 1997; Shain 1994.

4 Safran 1991, 83-99.

առանցքի վերաբերյալ տեսական գրականությունը և, որպես մեթոդաբանական հիմք, ընդունում ենք արևմտյան մի շարք հեղինակների մոտեցումները:

Հոդվածը նպատակ է հետապնդում բացահայտելու հայրենիքի մասին պատկերացումները Լուս-Անջելեսի համայնքում, մասնավորապես՝ Հայաստանը որպես հայրենիք համարելու նրանց դիրքորոշումները և դրանից բխող հետագա միգրացիոն կողմնորոշումները: Լուս-Անջելեսի համայնքի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն Սփյուռքի ամենամեծերից է, մյուսներից տարբերվում է նրանով, որ ձևավորվել է տարբեր ժամանակաշրջաններում՝ մի շարք երկրներից այնտեղ հաստատված հայ էթնոսի միգրացիոն տարբեր խմբերի հիման վրա: Նրանք միմյանցից տարբերվում են մշակութային, կրոնական, լեզվական բազմազանությամբ, ինքնության և Հայաստանի հետ կապերի և կողմնորոշումների առանձնահատկություններով: Այն կարող ենք բաժանել «ավանդական» և «նոր» սփյուռքի: Ավանդական սփյուռքին են պատկանում Ցեղասպանությունից հետո Առաջավոր Ասիայում, եվրոպական երկրներում, Ամերիկայի տարբեր նահանգներում բնակություն հաստատած և այնուհետև Լուս-Անջելես ներգաղթածները, իսկ «նոր» սփյուռքին՝ 1990-ական թթ. հետո Հայաստանից և նախկին Խորհրդային Միության այլ պետություններից/ԱՊՀ-ից արտագաղթածները: «Ավանդական» համայնքը միատարր չէ, և այն իր հերթին բաժանվում է մի շարք ենթահամայնքների: Նրանց մի մասը համախմբվելու, իրենց մշակութային առանձնահատկությունները, սովորույթները պահպանելու և սերունդներին փոխանցելու նպատակով ինքնակազմակերպվել և ստեղծել են հայրենակցական միություններ: Դրանք կրում են հայրենի բնօրրանների անվանումները՝ Վասպուրական, Խարբերդ, Տարոն, Այնթափ, Մարաշ, Ուրֆա, Մուսալեռ ևն: Մյուսները ձևավորվել են ցեղասպանությունից հետո ընդունող երկրների անուններով, որոնց նպատակն է համախմբել այդ երկրներից Լուս Անջելեսում հաստատված ներգաղթյալներին՝ իրանահայերի, իրաքահայերի, ռումինահայերի, հունահայերի, բուլղարահայերի, պոլսահայերի հայրենակցական միություններ: Կարող ենք առանձնացնել նաև «նոր ամերիկահայերի» շերտը, որը Սփյուռքի երիտասարդ սերունդն է՝ ԱՄՆ-ում ծնվածները: Նրանց մեջ կան շատերը, որ ավանդական կառույցներին չանդամակցելը կամ հայրենիքի մասին աղոտ պատկերացում ունենալը ոչ թե ինքնության կորուստ են համարում, այլ ազատագրում իրենց կաշկանդող ավանդույթներից և սովորույթներից:

Հետազոտության օբյեկտը Լուս-Անջելեսում բնակվող ավանդական և նոր Սփյուռքի անդամներն են, իսկ առարկան՝ «հայրենիք» պատկերացումների համատեքստում համայնքում տեղի ունեցող էթնոմշակութային և սոցիալական գործընթացները:

Աշխատանքում քննարկվել են հետևյալ խնդիրները. Լուս-Անջելեսի համայնքի բոլոր խմբերի համար հայրենիքը և պետության սահմանները որքանով են նույնացվում, ի դեմս Հայաստանի՝ արդյո՞ք հավաքականորեն վերարտադրում են հայրենիքի գաղափարը, և դ՞ր խմբերն են այն վիճարկում, դրանք ինչ ազդեցություն են թողնում իրենց միգրացիոն վարքագծի վրա:

Հոդվածի առաջին բաժնում տեսական մակարդակով քննարկվում են սփյուռք-հայրենիք-պետություն մոտեցումները, հաջորդ բաժնում անդրադառնում ենք հոդվածի մեթոդաբանական հիմքին և նշում, որ նյութերը հավաքվել

են որակական մեթոդով: Այնուհետև խորացված հարցազրույցների արդյունքների հիման վրա մենք բովանդակային նյութեր ենք ներկայացնում Լոս-Անջելեսի հայկական համայնքում հայրենիքի մասին իրենց ունեցած պատկերացումների վերաբերյալ: Եզրակացությունում ամփոփում ենք հիմնական արդյունքները և այն համադրում սփյուռքի ուսումնասիրություններին առնչվող նոր խնդիրների բարձրացման հետ:

Տեսական քննարկում սփյուռք-պետություն-հայրենիք հիմնախնդրի վերաբերյալ

«Սփյուռք» հասկացությունն ավանդաբար վերագրվել է գոհի կարգավիճակում հայտնված էթնիկ այն խմբերին, որոնք բռնի տեղահանվել են իրենց հայրենիքից: Որպես այդպիսիք՝ առաջին հերթին նշվում են հայերը, հրեաները և հույները: Սփյուռքի գրականության մեջ այս խմբերը հիշատակվում են որպես «ավանդական» կամ «դասական» սփյուռք: Ըստ դասական տեսության կողմնակիցների՝ ընդունող հասարակությունից տարբերակված ինքնության, ինչպես նաև համայնքային սահմանների պահպանումը հիմնաքարային է սփյուռքյան համայնքների գոյության համար: Նրանք համակարծիք են, որ ինքնությունը հիմնված է ընդհանուր էթնիկ և ազգային պատկանելության վրա: Ըստ ամերիկացի քաղաքագետ Վիլիամ Սաֆրանի՝ «սփյուռք» կոչվելու համար գաղթական խմբերը պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին.

- կենտրոնից ցրվածություն դեպի երկու կամ ավելի երկրներ կամ տարածաշրջաններ,
- հավաքական հիշողություն, ընդհանուր տեսլական կամ առասպելի պահպանում,
- համոզմունք, որ ընդունող երկրի կողմից իրենց լիարժեք ընդունումը հնարավոր չէ, որն էլ հանգեցնում է օտարման և վիրավորանքի,
- նախնիների հայրենիքը՝ որպես իրական կամ իդեալական տուն և վերջնական վերադարձի վայր,
- նվիրվածություն հայրենիքում անվտանգության և բարգավաճման պահպանմանը կամ վերականգնմանը,
- անձնական կամ խմբային հարաբերություններ հայրենիքի հետ էթնիկ-համայնքային գիտակցության մեջ⁵:

Սփյուռքի գոյատևման համար, բացի անհատական և ընտանեկան հույզերից, կարևոր են նաև ավելի մեծ էթնոազգային միավորին պատկանելու զգացումը և գիտակցությունը, որի հետ կապված են համերաշխությամբ և ծառայելու նվիրումով, ինչպես նաև հրապարակավ նույնականացումը այդ խմբի հետ: Ընդունող հասարակությունից սփյուռքի օտարվածությունը պայմանավորված է էթնիկ պատկանելության վրա խարսխված հավաքական գիտակցությամբ, մեկ միասնական պատմություն և ճակատագրի ունենալու հանգամանքով, ինչպես նաև խմբին սպառնացող վտանգի հանդեպ վախի զգացումով⁶:

5 Safran 1991.

6 heffer 2002.

Համաշխարհայնացումը, նոր միգրացիոն հոսքերի հայտնվելն առավել բարդացրին սփյուռքի սահմանման խիստ չափանիշների մշակումը՝ ծնունդ տալով սփյուռքի ժամանակակից տեսություններին:

Ըստ Վիլիամ Սաֆրանի՝ հայրենիքը առասպելական արժեք ունի սփյուռքի համար: Հայրենիքի սուրբ վայրերը և հուշարձանները համարվում են նախնիների հիշողություններ: Ուսումնասիրելով հրեական սփյուռքները՝ նա նշում է, որ դրանք գոյություն ունեն գրեթե բացառապես որպես սփյուռքյան երևույթ⁷:

Սփյուռքի ժամանակակից տեսությունները քննադատեցին ինքնության, համայնքի, ազգային պատկանելության «բնականացման» միտումը: Նրանք շեշտում էին սփյուռքի փորձի, ներհամայնքային տարբերությունների գաղափարը՝ նշելով, որ այն պետք է սահմանվի սփյուռքի բազմազանության ճանաչման միջոցով⁸: Ամերիկահայ սփյուռքագետ Խաչիկ Թոլոլյանը նշում է, որ սփյուռքի բնորոշմանը սպառնում է լայն հասկացություն դառնալու վտանգ, քանի որ այն ներկայումս ընդգրկում է նաև «ներգաղթյալ», «հայրենիքից վտարված», «փախստական», «աշխատանքային միգրանտ» այլ կատեգորիաները, և այդ եզրույթը հստակեցնելու անհրաժեշտություն ունի⁹: Խ. Թոլոլյանը, որպես «սփյուռք» եզրույթի կարևոր տարբերակիչ առանձնահատկություններ, նշում է սփովածությունը, ազգային *տրավմա*ի հիշողությունը, հավաքական ինքնությունը, հայրենիքի հետ ունեցած կապերը: Նա կարևորում է սոցիալական, մշակութային և քաղաքական էլիտաների աշխատանքը, որոնք պատասխանատու են սփյուռքի ինքնությունների ստեղծման կազմակերպված և գիտակցված ջանքերի գործադրման համար¹⁰: Այս գործողություններն ունեն շարունակական բնույթ և փոխանցվում են սերնդեսերունդ: Եթե սփյուռքյան ինքնությունը պահպանելու համար ջանքեր չգործադրվեն, ապա դա կհանգեցնի ամբողջական ձուլման:

Ըստ Սթիվեն Վերտովեքի՝ սփյուռքը ապակենտրոնացված երևույթ է՝ բազմակողմանի հարաբերություններով սփյուռքյան համայնքների, հայրենիքի և ընդունող երկրի հետ: Նրա դիտարկմամբ՝ հավաքական ինքնության հիմքում ընկած է ա) «էթնիկ հայրենիքի», պատմական և հստակ աշխարհագրական տարածքի հանդեպ պատկանելության զգացումը, բ) փոխադարձ հարաբերությունների և հաղորդակցման ցանցերի ինստիտուցիոնալացումը պետական սահմաններից դուրս, համայնքային նորատիպ կազմակերպությունների հիմնումը, գ) հայրենիքի հետ ուղղակի կամ անուղղակի կապերի պահպանումը, դ) համախմբման նպատակով այլ երկրներում ապրող իրենց էթնիկ հանրույթների հետ կապերի զարգացումը, ե) ընդունող հասարակությունում ինտեգրվելու կարողության կամ ցանկության պակասը, օտարվածության, մերժման, առավելության կամ որևէ այլ տիպի «տարբերության» զգացումի խթանումը¹¹:

Որոշ հետազոտողներ քննադատեցին սփյուռքի դասական հայեցակար-

7 Safran 2005.

8 Hall 2015.

9 Tölölyan 1996.

10 Tölölyan 1999.

11 Vertovec 1997.

գը, որը փորձում է պատկերել սփյուռքը որպես «քվազի-հասարակություն»։ Նրանք առաջարկում են սփյուռքը սահմանել որպես պրակտիկ կատեգորիա, որն ի վիճակի է պահանջներ ներկայացնել, նախագծեր կազմել և մարդկանց մոբիլիզացնել¹²։ Նոր համայնքներն ուսումնասիրելիս գիտնականները վերահաստատեցին «սփյուռք» եզրույթը և առաջարկեցին այն օգտագործել որպես պրակտիկայի կատեգորիա, պահանջատիրություն, դիրքորոշում, այլ ոչ թե սահմանափակ և ստատիկ խումբ¹³։

Դասական և ժամանակակից սփյուռքյան տեսություններում կան որոշակի անհամաձայնություններ՝ «սփյուռք» և «հայրենիք» հասկացությունների հետ կապված։ Ըստ Ռոջերս Բրուքերների՝ էթնիկ հայրենիքի և արդի ազգային պետության սահմանները չեն նույնացվում, քանի որ սփյուռքացման հետևանքով հայրենիքը դադարում է ֆիզիկապես գոյություն ունենալ կամ խիստ փոփոխությունների է ենթարկվում, բայց շարունակում է ծառայել որպես սփյուռքյան ինքնագիտակցության ձևավորման հիմք¹⁴։ Սփյուռքը հայրենիքի գաղափարը վերարտադրում է հավաքականորեն, երբ անգամ հայրենիքի գոյությունը վիճարկվում է¹⁵։

Այսպիսով, գրականության մեջ հայկական սփյուռքը հիմնականում դիտարկվել է որպես «դասական» սփյուռքի օրինակ։ Բայց մենք Լոս-Անջելեսի համայնքում սփյուռք-հայրենիք-պետություն հարցը քննարկելիս կարևորելու ենք նրա բազմատարր լինելու հանգամանքը, որը ձևավորվել է ավանդական և ժամանակակից սփյուռքի տարբեր մշակութային և միգրացիոն ենթախմբերի հիման վրա։ Այն մենք կդիտարկենք ժամանակակից սփյուռքի տեսությունների շրջանակում։

Մեթոդաբանություն

Հոդվածի համար հիմք են ծառայել 2020-2021 թթ. Լոս-Անջելեսի հայկական համայնքում և Հայաստան վերադարձած ընտանիքների շրջանում խորացված հարցազրույցի մեթոդով հավաքված որակական հետազոտության նյութերը։ Կենսագրական հարցման մեթոդով հարցազրույց իրականացվել է Լոս-Անջելեսի հայերի տարբեր սերունդների և միգրացիոն խմբերի շրջանում՝ 20 ընտանիքում, իսկ Հայաստանում՝ ԱՄՆ-ից, Սիրիայից, Ռուսաստանից, Լիբանանից, Իրանից Հայաստան ներգաղթած և բնակության հաստատած 19 ընտանիքում։ Հետազոտության մասնակիցներին գտնելու նպատակով օգտագործվել է ձևակույտի մեթոդը, որտեղ կարևորվել է նաև հնարավորինս շատ մեկնարկային կետեր ունենալու հանգամանքը։ Լոս-Անջելեսում հարցմանը ներգրավված են եղել այնտեղ բնակվող սիրիահայեր, իրանահայեր, լիբանանահայեր, Հայաստանից արտագաղթածներ, ամերիկահայեր և այլ խմբեր։

Իրականացվել է 21 փորձագիտական հարցազրույց (10-ը՝ Սփյուռքում, 11-ը՝ Հայաստանում)։ Փորձագետ են համարվել այդ ոլորտի հետազոտողները,

12 Brubaker 2005, 4.

13 Reis 2004; Brubaker 2005; Tölölyan 1996; Wahlbeck 2002.

14 Brubaker 2005.

15 Wahlbeck 2002.

ՀՀ-ում սփյուռքի քաղաքականությամբ զբաղվող մասնագետները և սփյուռքյան կազմակերպությունների ներկայացուցիչները:

Կիրառվել է նաև փաստաթղթերի վերլուծության մեթոդը, որով ուսումնասիրվել են Սփյուռքին և հայրենադարձությանն առնչվող միջազգային և ՀՀ մի շարք իրավական փաստաթղթեր, վիճակագրական, պատմական, ազգագրական նյութեր և այլ հրապարակումներ:

Հայաստանում և Լոս-Անջելեսում, կորոնավիրուսային համավարակի (COVID-19) հետ կապված, հետազոտության մեծ մասն անցկացվել է առցանց հարթակում, հարցազրույցները նախապես պլանավորվել և իրականացվել են zoom համակարգչային ծրագրով (38 հարցազրույց): Համակողմանի տեղեկատվություն ստանալու նպատակով հարցազրույցի մասնակիցների հետ ձևավորվել է վստահության մթնոլորտ, պահպանվել են անանոնությունը, տվյալների գաղտնիությունը, նրանց մասնավոր կյանք չհերթադրվելու հանգամանքը:

Մե՞կ, թե՞ մի քանի հայրենիք. Լոս-Անջելեսի համայնքի ուսումնասիրության արդյունքները

Լոս-Անջելեսի համայնքի տարբեր սերունդների և խմբերի շրջանում կարծիքներ են հավաքվել նաև հայրենիքի մասին՝ պարզելու համար, թե որքանով են հայրենիքի և հայոց պետության սահմանները համընկնում, նրանց պատկերացմամբ՝ հայրենիքը մե՞կն է, թե՞ մի քանիսը, և ինչ տեղ է գրավում Հայաստանը: Այդ նպատակով քննարկվել է հետևյալ հարցը. *«Թույլ տվե՞ք հայրենիքի մասին մի ընդհանուր հարց տալ: Հայրենիքի մասին մարդկանց պատկերացումները տարբեր են: Ումանք հայրենիք են համարում իրենց ծննդավայրը, ումանք՝ այն պետությունը, որտեղ ապրում են, մյուսները՝ իրենց պապերի երկիրը: Դուք ինչ պատկերացում ունեք հայրենիքի մասին»:* Հարցազրույցի մասնակիցների կարծիքներն այս հարցում շատ բազմազան են՝ պայմանավորված Լոս-Անջելեսում ապրելու ժամկետներով, Սփյուռքի տարբեր սերունդները ներկայացնելու, ծագման երկրի, ինքնության մասին պատկերացումների, համայնքի անդրազգային կառույցներում ներգրավվածության, այս կամ այն երկրի հետ կապվածության և այլ հանգամանքներով: Հարցմանը մասնակցած՝ ավանդական Սփյուռքի ներկայացուցիչների շուրջ կեսը հայրենիք է համարել իր ծննդավայրը՝ Սիրիան, Լիբանանը, Իրանը, Եգիպտոսը և այլ երկրներ, որտեղից ինքը կամ ծնողները ներգաղթել են: Ավանդական Սփյուռքի մի հատվածը Հայաստանը ոչ բոլոր դեպքերում է նույնականացնում պատմական հայրենիքի հետ: Հայաստանն ավելի շատ ընկալվում է իբրև համայն հայության կենտրոն: Հայաստանի՝ որպես հայրենիքի հետ կապերի հաստատումը նրանց մի մասի գերակայությունների մեջ չի մտնում, քանի որ իրենց ծագմամբ չեն առնչվում այդ տարածքին: Սիրիայում ծնված և Լոս-Անջելես ներգաղթած հարցազրույցի մասնակիցն այդ հարցում արտահայտեց հետևյալ կարծիքը. *«Իմ հայրենիքն այն է, որտեղ ծնվել եմ, մեծացել եմ: Այսինքն՝ Հալեպ, Սիրիա: Իմ ծնողներն էլ են այնտեղ ծնվել: Ես Սիրիան եմ համարում իմ հայրենիքը»* (կին, 39 տ., Լոս-Անջելես):

Հայկական սփյուռքի տարբեր համայնքներում մեկ այլ հետազոտության արդյունքները նույնպես փաստում են ծննդավայրը հայրենիք համարելու գոր-

ծոնը: Ելնելով դրանից՝ հարցման մասնակիցների 54%-ը Հայաստանը դիտարկել է որպես հայրենիք: Այդ առումով հարցմանը մասնակցած փորձագետներից մեկը նշեց հետևյալը. «Մենք 2018-2019 թթ. հեղափոխություն ենք իրականացրել սփյուռքի փարբեր համայնքներում: Հարցրել ենք, թե որն եք համարում Ձեր հայրենիքը, և նրանց մեծամասնությունը պատասխանել է. «Այնպեղ, որպեղ ես ծնվել եմ»: Միայն 54%-ն է Հայաստանը նշել որպես հայրենիք: Մնացած մասի համար Հայաստանը հայրենիք չէ: Կազմակերպությունները, պետությունը, ավանդական կուսակցությունները Հայաստանը միշտ ասում են հայրենիք, բայց կրեանես, որ սփյուռքի ներսում այդ ամենն ուրիշ է» (փորձագետ, Մեծ Բրիտանիա):

Աշխարհագրական տարածքի մասին հիշողության առումով նրանց համար խնդրահարույց է մնում պետության և պատմական հայրենիքի համընկնման հարցը: Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցվածների որոշ մասը հայրենիք համարել է նախնիների, պապերի երկիրը՝ Արևմտյան Հայաստանը:

Պետության՝ որպես հայրենիքի դերը կարևորել են նաև ԱՄՆ-ում ծնված՝ Սփյուռքի երկրորդ և երրորդ սերունդները: Մեր հարցազրույցի մասնակիցներից մեկը, որ ներկայացնում է Սփյուռքի երկրորդ սերունդը և ծնվել է ԱՄՆ-ում, նշեց հետևյալը. «Իմ կարծիքով՝ շատ կապ ունի, թե որպեղ ես ծնվել: Բայց եթե ծնողներդ եկել են մի երկրից, և այդ կապվածությունը կա, դա էլ նշանակություն ունի: Ես կարծում եմ, որ ես ավելի շատ ամերիկյան մշակույթի կրող եմ, այսպեղ եմ մեծացել, և Ամերիկյան է իմ հայրենիքը» (տղամարդ, 60 տ., Լոս-Անջելես): Այդ առումով մեր մյուս մասնակիցը արտահայտեց հետևյալ կարծիքը. «Հոգով-սրտով հայ եմ: Բայց ես հիմա ԱՄՆ-ում եմ բնակվում և շատ պայտրիոր ամերիկացի եմ: ԱՄՆ-ի դրոշը միշտ աչքիս առաջ է: Երբ լսում եմ, որ մեկը ուրիշ պեղից եկել է ու հիմա բողոքում է Ամերիկայից, իրենց ասում եմ՝ դուրը բաց է, կարող եք գնալ: Արդեն քառասուն փարի է՝ այսպեղ եմ, բայց սիրտս կապված է նաև Հայաստանի հեղ: Հայ եմ, բայց Ամերիկայի քաղաքացի եմ: Չեմ կարող փարանջարել այդ երկուսը: Հայ մարդ եմ, բայց հպարտ, որ ԱՄՆ-ում եմ ապրում և ոչ թե Սիրիայում կամ Պարսկաստանում» (կին, 66 տ., ներգաղթել է Իրանից): Հարցազրույցի ընթացքում ավանդական Սփյուռքի որոշ անդամներ Արևմտյան Հայաստանի փոխարեն Հայաստանն են համարել իրենց հայրենիքը, չնայած իրենք և ծնողները այստեղ չեն ծնվել: Այդ համատեքստում ներկայացնենք մասնակիցներից մեկի կարծիքը. «Ինձ համար իմ հայրենիքը Հայաստանն է. իհարկե, ո՛չ իմ հայրը և ո՛չ էլ ես Հայաստանում չենք ծնվել: Այն եղել է Արևմտյան Հայաստան, ուր իմ նախնիները ծնվել են, իսկ սա Արևելյան Հայաստանն է: Եթե Արևմտյան Հայաստանը չեղավ, ներկա Հայաստանը իմ հայրենիքս է, իմ հայացքս դեպի այնպեղ է» (տղամարդ, 48 տ., ներգաղթել է Սիրիայից):

Հարկավոր է ընդգծել, որ, ունենալով էթնիկ պատկանելություն՝ ոչ բոլորն են պահպանում հետաքրքրությունն իրենց հայ արմատների նկատմամբ. նրանց մեծ մասը լիովին ինտեգրված է ընդունող հասարակությանը և որևէ ցանկություն չունի Հայաստան տեղափոխվելու: Այդ առումով ներկայացնենք հարցազրույցի մասնակիցներից մեկի կարծիքը. «Օրինակ՝ մեր սերունդը, որ ծնվել է ԱՄՆ-ում, մեզ համար Հայաստանը, որպես հայրենիք, ներկայացնում

են որպես մի իդեալական վայր, որ այն մեր արյան մեջ է, և որ պիտի հպարտ լինենք Հայաստանով: Բայց իրականում դու չգիտես էլ, թե Հայաստանն ինչ է, քանի դեռ չես գնացել այնտեղ: Եվ այն կարող է հարյուր տոկոսով տարբեր լինել այն Հայաստանից, որը քո ծնողներն ու տարիկ/պապիկներն են ներկայացրել, որովհետև Հայաստանն էլ տարիների ընթացքում փոփոխվել է: Եվ կրկին ակնկալիքները մեծ կապ ունեն: Մեր ծրագրում մարդիկ կային, որոնց հետ մեկնել էի Հայաստան, ընդհանրապես չհավանեցին: Կարծում եմ՝ նրանք Հայաստան էլ չեն գնա» (կին 31 տ., Լոս-Անջելես):

Հայաստանից ներգաղթածների մեծ մասի համար Հայաստանի Հանրապետության ներկա տարածքը, ընդհանուր առմամբ, համընկնում է իրենց պատկերացրած հայրենիքի հետ: Հայաստանում ծնված մասնակիցն այդ առումով նշեց հետևյալը. «Իմ հայրենիքը Հայաստանն է: Ես այնտեղ ծնվել եմ, իմ անցյալն է այնտեղ, իմ հարազատներն են այնտեղ: Ես այն չեմ կարող համեմատել ուրիշ տեղերի հետ» (կին, 38 տ., Հայաստանից Լոս-Անջելես է ներգաղթել 2005 թ.): Առաջին սերնդի շրջանում այդ մոտեցումը հստակ արտահայտվում է, իսկ երկրորդի մակարդակով այդ հարցն արդեն պարունակում է որոշ անորոշություն: Հարցազրույցի՝ Ամերիկայում ծնված մասնակիցը, որի մայրը 1990-ական թթ. Հայաստանից էր ներգաղթել, մեր հարցին պատասխանեց հետևյալ կերպ. «Կարծում եմ, երկուսը՝ ԱՄՆ-ն և Հայաստանն են հայրենիքս, բայց երևի ավելի շատ Հայաստանը, որովհետև որ գնացի այնտեղ, արդեն հասկացա, որ Հայաստանի և Ամերիկայի միջև կան շատ տարբերություններ: Այստեղ բոլոր հայերն ապրում են էն մերքով, որ մի օր երևի կվերադառնան Հայաստան ու վերջնական կապրեն այնտեղ: Բայց չգիտեմ՝ այդ մի օրը երբ կգա: Որովհետև սպասում են, թե երկիրը երբ կլավանա, կամ թե այնտեղ երբ ավելի լավ աշխարհք կամ ֆինանսական վիճակ կունենան: Այդ երկուսն իրար հետ պետք է լինի երևի, որ մի օր վերադառնանք» (տղամարդ, 30 տ., Լոս Անջելես):

Հարցման մասնակիցների որոշ մասը երբեմն հստակ չէր կարողանում հնչեցնել որևէ երկրի անուն՝ միաժամանակ նշելով ոչ թե մեկ, այլ մի քանի հայրենիք՝ կարևորելով դրանց մշակույթի կրող լինելու հանգամանքը: Այդ առումով նրանցից մեկը դժվարացավ տարանջատել՝ Ամերիկան, թե՛ Հայաստանն է իր հայրենիքը. «Ես դժվար թե կարողանամ տարանջատել դրանք իրարից: Որովհետև չեմ կարող ասել՝ ավելի շատ Հայաստանը, թե՛ Ամերիկան է իմ հայրենիքը: Երբ հարցը լսեցի, ես նույն զգացողությունն ունեմ, երբ հարցնում են՝ հորդ ես ամենաշատը սիրում, թե՛ մորդ: Դժվար է ասել, երկուսն էլ շատ եմ սիրում: Դրանք միասին են, դրանք ինձ համար հայր և մայր են» (կին, 51 տ., Լոս-Անջելես): Սփյուռքի պատկերացումները հայրենիքի մասին բազմավեկտոր են, քանի որ հարցման մասնակիցների մի մասը միաժամանակ այն համարել է թե՛ նախնիների, պապերի երկիրը, թե՛ այն երկիրը, որտեղ ապրում է, և թե՛ այն պետությունը, որտեղ ապրում են նրա հայրենակիցները. «Սահմանումը չգիտեմ ինչպես է, բայց ինձ համար դա նախնիների երկիրն է, որի հետ միշտ կապ ես զգում: Բայց պիտի նաև նշեմ և շնորհակալ լինեմ այն երկրին, որտեղ ապրում եմ: Սրանք համարելիության կանոններին չեն հակասում: Մի հերաքրքիր բան էլ ավելացնեմ, իմ ընկերներից մեկը հայրենիքը համեմատում է մեղվի փեթակի հետ: Գաղափարն այն է, որ մարդիկ, տարբեր երկրներում գիտելիքներ

ստանալով, կարող են հեղափոխում այդ գիտելիքները հետ բերել հայրենիք՝ Հայաստանին ծառայեցնելու նպատակով» (տղամարդ, 30 տ., ծնվել է Լոս-Անջելեսում): Այս առումով հարցազրույցի մեր մյուս մասնակիցը պատասխանեց հետևյալ կերպ. «Դա շատ հեղափոխիչ հարց է: Ես կասեի՝ որտեղ ապրում ես և որտեղից, որ եկել ես, ներառյալ՝ որտեղից նախնիներդ են եկել» (տղամարդ, 27 տ., ծնվել է Ամերիկայում): Որոշ մասն էլ, որ սերտորեն առնչվում է անդրազգային կազմակերպությունների հետ և առավել հաճախ է այցելել Հայաստան, այն համարել է իր հայրենիքը. «Այս հարցն ինձ տալիս է քիչ տարօրինակ է, որովհետև ես երբեք իմ հայրենիքը չեմ համարի այն երկիրը, որտեղ ծնվել եմ՝ հաշվի առնելով, որ այն (Թուրքիան) նախաձեռնել է իմ նախնիների հանդեպ ցեղասպանությունը: Ես ինձ համար միշտ հայրենիքը համարել եմ Մայր Հայաստանը: Ես նաև մի հեղափոխիչ բան եմ նկատել, քանի որ ես շատ եմ ճանաչողում դեպի Հայաստան (ես արդեն 7 տարի է, ինչ այնտեղ դասավանդում եմ), ես նկատել եմ, որ Հայաստանի՝ որպես հայրենիքի նկատմամբ զգացողությունը կարծես թե շատ հայաստանաբնակներից և Հայաստանում ծնվածներից գոդացած լինեմ: Ներկայումս շատ հայեր, որ այնտեղ ծնվել և ապրում են, կորցրել են իրենց վարսիությունը պետության նկատմամբ: Սա հարկապես նկատելի էր մինչև հեղափոխությունը» (տղամարդ, 60 տ., Լոս-Անջելես է ներգաղթել Ֆրանսիայից):

Այսպիսով, պայմանավորված Լոս-Անջելեսի հայկական համայնքի բազմազանությամբ՝ ավանդական և նոր Սփյուռքի սերունդների, միգրացիոն խմբերի համար հայրենիքը կարող է լինել իրենց կամ ծնողների ծննդավայրը (օրինակ՝ Սիրիան, Լիբանանը, Հայաստանը ևն), ոմանց համար նաև այն պետությունը, որտեղ ապրում են (օրինակ՝ Ամերիկան), ոմանց համար՝ նաև նախնիների հայրենիքը (օրինակ՝ Արևմտյան Հայաստանը): Հարցման մասնակիցների համար հայրենիքի մասին ներկայացված այդ սխեման քարացած չէ և, կապված այնտեղ բնակության ժամկետների, ծագման երկրի, սերունդների և այլ գործոնների հետ, փոխվում է: Հարցի խոսույթի համար նրանք կարևորում են դրա անհատական և խմբային մոտեցումները՝ հիմնված տարածքային ինքնագիտակցության մասին պատկերացումների վրա: Հարցազրույցի մասնակիցների պատասխանները հնարավորություն են տալիս եզրահանգելու, որ Հայաստանը՝ որպես հայրենիք, միանշանակորեն չի ընդունվում նրանց կողմից, և, բնականաբար, հայրենադարձության խնդիրները քննարկելիս չպետք է անտեսել այդ հանգամանքը:

Եզրակացություն

Լոս-Անջելեսի համայնքում իրականացված որակական հարցազրույցների արդյունքները հնարավորություն են տալիս եզրահանգելու, որ համայնքի ոչ միատարր լինելու հանգամանքը նրա ավանդական և նոր սփյուռքի տարբեր խմբերի մեջ պայմանավորում է հայրենիքի նկատմամբ ունեցած պատկերացումները: Հայրենիքի մասին պատկերացումների ձևավորման համար հարցման մասնակիցները կարևորել են ծննդավայրի, տվյալ պետությունում երկար տարիներ բնակվելու, իրենց նախնիների երկրի, հայրենի պետության գործոնը: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանը՝ որպես Սփյուռքի բոլոր

խմբերի համար հայրենիք դառնալու հանգամանք, նրանց մի մասի կողմից վիճարկվում և միանշանակ չի ընդունվում: Հետազոտության նյութերը հնարավորություն են տալիս նոր խնդիրներ և մոտեցումներ բարձրացնելու սփյուռք-հայրենիք-պետություն առնչությունների վերաբերյալ: Մասնավորապես, այդ առումով վերանայման, համակողմանի քննարկման կարիք ունի Սփյուռքը՝ որպես մեկ ամբողջական համակարգ համարելու և դրա հիման վրա Հայաստանը մշտական վերադարձի երկիր դիտարկելու և հայրենադարձության հիմքում դնելու մոտեցումը: Ելնելով Սփյուռքի բազմազան լինելու հանգամանքից՝ այդ խնդիրը պահանջում է թիրախային մոտեցում: Հոդվածում կարևորում ենք նաև Սփյուռքի համար Հայաստանը «հայրենիք» դառնալու կարողությունների և ներուժի համակողմանի բացահայտումը, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպելու Հայաստան նրանց վերադարձի գործընթացները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ 1975

Մելիքսեթյան Հ.Ու., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940), Երևան, ԵՊՀ հրատ., 1975, 296 էջ:

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ 1983

Մելիքսեթյան Հ.Ու., Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1962-82 թթ. // Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, N 7, 3-13:

ARMSTRONG 1976

Armstrong J., Mobilized and proletarian diasporas // American political science review, 1976, 70, N 2, 393-408.

BRUBAKER 2005

Brubaker R., The 'diaspora' diaspora // Ethnic and racial studies, 2005, 28, N 1, 1-19.

HALL 2015

Hall S., Cultural Identity and Diaspora, In Colonial discourse and post-colonial theory, Routledge, 2015, 392-403.

LAYCOCK 2012

Laycock J., Armenian Homelands and Homecomings, 1945-9: The Repatriation of Diaspora Armenians to the Soviet Union" // Cultural and Social History, 2012, 9 (1), 103-123.

PAMELA 1986

Pamela A.S., The Palestinian Diaspora, 1948-1985, Journal of Palestine Studies, 1986, 15, N 3, 90-108.

REIS 2004

Reis M., Theorizing diaspora: perspectives on "classical" and "contemporary" diaspora, International migration, 2004, 42, N 2, 41-60.

SAFRAN 1991

Safran W., Diasporas in modern societies: Myths of homeland and return // Diaspora: A journal of transnational studies, 1991, 1, N 1, 75-99.

SHAIN 1994

Shain Y., Marketing the democratic creed abroad: US diasporic politics in the era of multiculturalism, Diaspora: A Journal of Transnational Studies, 1994, 3, N 1, 85-111.

SHEFFER 2002

Sheffer G., A nation and its diaspora: A re-examination of Israeli-Jewish Diaspora rela-

tions, *Diaspora: A Journal of Transnational Studies*, 2002, 11, N 3, 331-358.

TÖLÖLYAN 1996

Tölölyan Kh., Rethinking diaspora (s): Stateless power in the transnational moment, *Diaspora: a journal of transnational studies*, 1996, 5, N 1, 3-36.

TÖLÖLYAN 1999

Tölölyan Kh., Diaspora as a Concept and a Metaphor, In *Barnard Forum on Migration*, Barnard College, 1999:

VERTOVEC 1997

Vertovec St., Three meanings of “diaspora” exemplified among South Asian religions // *Diaspora: A Journal of Transnational Studies*, 1997, 6, N 3, 277-299.

WAHLBECK 2002

Wahlbeck Ö., The concept of diaspora as an analytical tool in the study of refugee communities, *Journal of ethnic and migration studies*, 2002, 28, N 2, 221-238.

Nare M. Galstyan

PhD Senior Researcher

PERCEPTIONS OF HOMELAND IN THE ARMENIAN COMMUNITY OF LOS ANGELES

Keywords: Diaspora, identity, homeland, state, migrant, diversity, transnational

Researchers examining diaspora-related issues have long regarded the orientation towards the homeland as a pivotal component of diaspora identity. Supporters of this perspective perceive the homeland as an idealized concept, a place to which diaspora members aspire to return continually. Some scholars posit it as a foundation for collective mobilization within the diaspora. Within this framework, the Republic of Armenia is seen as a permanent return destination for the diaspora. However, a complex question arises concerning the Los Angeles Armenian community: to what extent do its members, who hail from diverse migration backgrounds, sub-ethnic groups, and generations, and possess distinct cultural, linguistic, and religious identities, delineate the boundaries of their homeland and state?

This article, grounded in the theoretical underpinnings of the heterogeneous nature of the diaspora, will explore several key questions. Has the identity of the Armenian diaspora, formed over a century or more, undergone transformations? What notions do they hold regarding the homeland, and does Armenia still serve as the basis of their identity formation? Through the lens of Armenia, do they collectively perpetuate the idea of homeland, and which segments of the Los Angeles diaspora may contest this notion? How do these dynamics influence the process of returning to Armenia? The ideas presented herein can also contribute to the ongoing academic discourse on diaspora, especially for those who characterize the diaspora as a migrant group intrinsically linked to the state. Some researchers posit that the disconnect between diasporic groups and their homeland is not solely geographical but also symbolic, encompassing variations in ancestral perceptions and traditions. Establishing a connection with Armenia as the homeland may not rank high in the priorities of certain sections of the community, as they may not identify with a specific territorial origin.

The research conducted within the community reveals that perceptions of homeland are multifaceted and influenced by various factors, including the duration of residence in Los Angeles, representation across different diaspora generations, conceptions of their country of origin, individual identity, engagement in transna-

tional community structures, and connections to various countries, among other considerations. Furthermore, these factors lead them to acknowledge not just one, but several homelands as carriers of their culture.

This article draws upon analysis of 49 in-depth interviews and 21 expert interviews conducted in both Los Angeles and Armenia during 2020-2021.

Наре Миграновна Галстян

К.С.Н

ПРЕДСТАВЛЕНИЯ О РОДИНЕ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ЛОС-АНДЖЕЛЕСА

Ключевые слова: диаспора, идентичность, родина, государство, мигрант, многообразие, транснациональный.

Исследователи, занимающиеся проблемами диаспоры, считают ориентацию на Родину одним из важных факторов диаспоральной идентичности. Сторонники этой концепции рассматривают Родину как идею, идеализированное место, куда постоянно стремятся вернуться члены диаспоры. Некоторые авторы рассматривают ее как основу коллективной мобилизации диаспоры. В рамках этого подхода Республика Армения рассматривается как страна постоянного возвращения диаспоры, но здесь остается проблематичным вопрос: насколько идентичны границы Родины и государства для разных этнических и субэтнических групп, разных поколений армянской общины Лос-Анджелеса, людей, имеющих разную культурную, языковую, религиозную идентичность.

В статье на основе теоретических подходов о неоднородности и гетерогенности диаспоры исследуются следующие вопросы:

- Не изменилась ли идентичность армянской диаспоры, сформированной на протяжении столетия и более, и какие представления они имеют о Родине?
- Продолжает ли Армения служить основой формирования идентичности диаспоры?
- Воспроизводят ли коллективно они идею Родины в лице Армении, и какие группы в Лос-Анджелесе ее оспаривают?
- Какое влияние они оказывают на процесс возвращения в Армению?

Идеи, выдвинутые в статье, могут также способствовать прояснению научных дискуссий о диаспоре, сторонники которых отождествляют понятия «родина» и «государство» и рассматривают диаспору как группу мигрантов, непосредственно связанных с государством. Некоторые исследователи добавляют, что дистанция между диаспоральными группами и родиной носит не только географический, но и символический характер и связана с различиями в восприятии предков и традиций. Установление связей с Арменией как с родиной не входит в число приоритетов некоторой части общины, поскольку она не идентифицирует себя с точки зрения территориального происхождения.

Результаты исследования в общине показывают, что представления о родине многовекторны, что обусловлено рядом факторов: периодами проживания в

Лос-Анджелесе, репрезентацией разных поколений диаспоры, страной происхождения, представлениями об идентичности, вовлеченностью в транснациональные структуры общины, привязанностью к той или иной стране и другими обстоятельствами. Более того, в силу названных факторов они, как носители их культур, упоминали не одну, а несколько родин одновременно.

Статья основана на контент-анализе 49 глубинных и 21 экспертных интервью, проведенных в Лос-Анджелесе и Армении в 2020-2021 гг.

Ներկայացվել է՝ 12.02.2024

գրախոսվել է՝ 18.07.2024

ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Արելի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanianhasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ

lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

սլավոնական գիրությունների դոկտոր, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի

Սոցիոլոգիական գիրությունների թեկնածու

ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի*պատմական գիտությունների դոկտոր*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու*կենսաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային
մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ
լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի

սլավոնական գիությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի

ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի

սլավոնական գիությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan

To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan

The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan

Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan

Main issues of Armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan

"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan

Authenticity discourse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan

Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan

Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush

Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan

Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan

Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan

Roman Hovsepyan

The ethno-cultural role of food in the cycle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan

The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan

Perceptions of homeland in the Armenian community of Los Angeles 204

Nelli Khachaturyan

Salvine Markosyan

Mariam Harutyunyan

Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan

Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW

248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян

Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян

Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян

Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян

Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян

“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян

Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян

Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджян

Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш

Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян

Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян

Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

*Асмик Абрамян**Роман Овсепян*

Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДΙΑСПОРЫ

Рубен Карапетян

Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян

Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

*Нелли Хачатурян**Сальвине Маркосян**Мариам Арутюнян*

Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсима Асатрян

Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

248

263

ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփեյյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

